Տպագրված է ընդամենը 3 օրինակ

Օրինակ 3

Կազմված է «08» հուլիսի 2018թ.
Ընդունված է «Միավորված հայեր» կուսակցության հիմնադիր համագումարում
«08» հուլիսի 2018թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Գրանցման ամսաթիվ 06. 11. 2018թ

Գրանցման համար 211.172.1044908

ՀՎՀՀ 01286723

Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ

ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳՅԱՆ

05

ԾՐԱԳԻՐ

«ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ք.ԵՐԵՎԱՆ – 2018թ.

ԾՐԱԳԻՐ
«ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

«Միավորված հայեր» կուսակցության (հապավումը՝ ՄՀԿ) նպատակը Հայաստանում ճշմարիտ սոցիալ-իրավական և ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության ստեղծումն է, որտեղ կգործի իրավունքի գերակայությունը, բոլորը հավասար կլինեն օրենքի առջև, և որտեղ կպաշտպանվեն մարդու իրավունքները:

ՄՀԿ-ն քաղաքական դաշտը բաժանում է երեք ուժերի. իշխանամետ առաջին ուժ, ընդդիմադիր՝ երկրորդ ուժ և պետականամետ՝ այլընտրանք առաջին և երկրորդ ուժերի, երրորդ ուժ: Կուսակցությունը՝ որպես երրորդ ուժ, ընդդիմություն լինել չի կարող, բայց կարող է համագործակցել նրա և այլ ուժերի հետ: Կուսակցությունը ձգտում է իրական սոցիալական արդարության, արժանապատվության, օրինականության և բարոյականության համամարդկային արժեքներին համապատասխանող իրավական հասարակության կայացմանը, որը կհանդիսանա ազգային միասնության ամուր երաշխիք:

«Միավորված հայեր» կուսակցության՝ որպես ազգային - հայրենասիրական, կենտրոնաձիգ, հզոր և կայուն պետականության կողմնակից երրորդ ուժի, խնդիրներն են նպաստել հայոց պետականության ամրապնդմանը, գիտական, տնտեսական և հոգևոր ներուժի զորացմանը, ժողովրդի համակողմանի զարգացմանն ու բարգավաճմանը, արտագաղթի կանխմանը, աշխարհասփյուռ հայության՝ Մայր Հայրենիքի շուրջը համախմբմանը, քաղաքական մթնոլորտի առողջացմանը, քաղաքացիական հասարակության կառուցմանը, ՀՀ Սահմանադրության շրջանակներում ժողովրդավարական իշխանությունների կազմավորմանը և հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, Հայ Դատի, նրա մասը կազմող արցախյան հիմնահարցի արդարացի լուծմանը, ազգային պետական հիմնախնդիրների լուծման գործում հասարակական, քաղաքական կազմակերպությունների, ազդեցիկ գործիչների ջանքերի համատեղմանն ու հավաքական ուժի ստեղծմանը:

ՄՀԿ - ն ընդունում է ազատականացված տնտեսական քաղաքականությունը՝ ներառելով համայնավարական տնտեսության կառավարման որոշ դրույթներ, մասնավորապես, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերում պետության պարտադիր մասնակցությունը և/կամ վերահսկողությունը:

Ռազմավարական այս նպատակների ու խնդիրների կենսագործումը պահանջում է անհապաղ մշակել և իրականացնել սոցիալ-իրավական, տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային միջոցառումներ, որոնց իրագործման համար ընտրում է միմիայն

ժողովրդավարական ուղիներ՝ արդար, ազատ և թափանցիկ ընտրությունների միջոցով, Սահմանադրությամբ նախատեսված կարգով:

Կուսակցությունը հանրային կյանքի կազմակերպման հայեցակարգի վերաբերյալ կուսակցության մոտեցումներն արտացոլող ծրագրային դրույթներն իրականացում է խաղաղ ճանապարհով:

1. ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՄՀԿ-ն առաջնորդվում է ազգային գաղափարախոսությամբ, որի հիմքն է համազգային սթափ մտածողությունը, որը, համամարդկային արժեքներն ընդունելով հանդերձ, ենթադրում է առաջնորդվել ազգային շահերով: Ազգային գաղափարախոսությունը վեր է կանգնած հասարակական խավերից, կուսակցություններից և անհատական շահերից: Դրա հիմքում պետք է լինեն սոցիալ-իրավական արդարությունն ու բարոյականությունը, որոնք առաջնորդելու են հայ ժողովրդին դեպի հասարակական համերաշխություն: Հասարակական-պետական կենսագործունեության տեսակետից վնասակար ու անընդունելի են այն փոփոխությունները, որոնք, թեկուզև ժամանակավորապես, թուլացնում են հասարակության միջին խավը, քանի որ դա հանգեցնում է համազգային ուժի թուլացման: Ազգային գաղափարախոսությամբ առաջնորդվելու դեպքում նվազագույնի կհասնեն իշխանությունների վրիպումներն ու սխալները:

Կուսակցությունը գտնում է, որ պետության դերը տվյալ համակարգում առաջնահերթային է, եթե բարեփոխումների իրականացումը տեղի է ունենում սահմանադրական, տնտեսական, սոցիալական և պետական կառավարման ոլորտներում:

Տնտեսության բնագավառում առաջնահերթ կարևորվում են արդյունաբերության և գյուղատնտեսության այն ճյուղերը, որոնք հնարավորություն են ընձեռնում Հայաստանում ավելի մեծ թվով հայրենակիցների բնակեցման, միջին խավի ամրապնդման համար, խթանում են տարածքային միավորների համամասնական զարգացումը, բնապահպանական ծրագրերի իրականացումը: Այդ նպատակով անհրաժեշտ է ապահովել տնտեսական տարբեր ճյուղերի էներգետիկ անվտանգությունը և տնտեսական երաշխիքները, ստեղծել էներգետիկ նոր հզորություններ ու էներգիայի նոր այլընտրանքային աղբյուրներ:

Հատուկ ուշադրության են արժանի գիտության այն բնագավառները, որոնց կենտրոնն է համարվում Հայաստանը, իսկ կրողը՝ հայ ժողովուրդը:

Ազգային գաղափարախոսության առումով հասարակական կյանքում ընթացող բոլոր երևույթները գնահատվում են ազգային միասնության ազգահավաքի, ազգային հոգեկերտվածքի և բարոյականության տեսանկյունից: Այդ նպատակով ՄՀԿ-ն իր առջև խնդիր է դնում՝

- հայոց բուն թվականության վերականգնումը մ.թ.ա. 2492 թվականից՝ կիրառվող թվարկությանը զուգահեռ,
- պետականորեն օգոստոսի 11-ը՝ որպես հայոց նոր տարվա՝ Նավասարդի նշումը,
- գրաբարի՝ առավել գործածական և գեղեցկագույն բառերի պետականորեն վերականգնումը,
- Երևան քաղաքի Էրեբունի /Երևան/ անվան պետականորեն վերականգնումը:

Առաջնային և հատուկ նշանակություն է տրվում Սփյուռքին: Առանց Հայրենիքի կամայանա Սփյուռքի ազգային կյանքը, իսկ առանց աշխարհասփյուռ հայության քաղաքական, բարոյական և նյութական աջակցության՝ առավել կբարդանա Հայաստանի բարգավաճման գործընթացը: Անհրաժեշտ է ապահովել իրավահավասարությունը ՀՀ քաղաքացիների և երկքաղաքացիություն ունեցող Սփյուռքի մեր հայրենակիցների համար:

ՄՀԿ ազգային գաղափարախոսության առանձնաշնորհն է համարվում ազգային բոլոր ուժերի միավորումը հանրապետության շուրջ, որը կնպաստի լուծելու պետության ամրապնդման և զարգացման գերխնդիրը՝ հասարակական, քաղաքական, սոցիալ-իրավական և այլ համոզմունքների պահպանմամբ համապատասխան իրավական և կազմակերպական կառույցների ստեղծումը, որոնք կապահովեն անհրաժեշտ պայմաններ համազգային խնդիրների լուծման գործում: Որպես Հայոց հավատքի, փառքի և միասնության խորհրդանիշ՝ հայ եկեղեցաշինության ճարտարապետական հանճարեղ գլուխգործոց ընդունելով Զվարթնոց տաճարը՝ ՄՀԿ-ն սատար է կանգնում դրա ազգովին վերականգնմանը:

ՄՀԿ-ն ազգային քաղաքականության մեջ առաջնային խնդիրներից մեկն է համարում Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների էթնիկական և մշակութային առանձնահատկությունների ճանաչումն ու հարգումը, հայ ժողովրդի հետ զարգացման հավասար պայմանների ապահովումը:

Հայաստանի մշակութային ամբողջ ժառանգությունը համարվում է հայ ժողովրդի համընդհանուր սեփականությունը՝ անկախ դրա ստեղծման ժամանակից, վայրից, հեղինակների կրոնական և քաղաքական հայացքներից:

Հայ Դատի հիմնահարցը պետք է դառնա ընթացիկ և ապագային միտված ազգային-պետական քաղաքականության առանցքային խնդիր, պետությունը պետք է նպաստի հայ ժողովրդի պատմական անցյալի ճանաչմանն ու ըստ արժանվույն գնահատմանը:

2. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գերագույն խնդիրներից ՄՀԿ-ն առաջնահերթ է համարում ՀՀ Սահմանադրության վերանայումը, որի շրջանակներում ցանկանում է.

- համաձայն գործող օրենսդրությամբ արգելել քաղաքական կուսակցություններին զբաղվել բարեգործական գործունեությամբ, ընտրակաշառքների բացառում,
- իրագործել սահմանադրական փոփոխություններ՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների գործառույթների հստակ տարանջատում,
- իրագործել դատաիրավական համակարգի բարեփոխումներ. եղած բարեփոխումները ցանկալի արդյունք չեն տալիս, քանի որ այդ ոլորտի կառույցներն իրենք են հաճախ գտնվում կոռումպացված հարաբերությունների ցանցում: Դատավորները պետք է ընտրվեն, այլ ոչ թե նշանակվեն: Պետք է գործի նաև նրանց հետ կանչման ինստիտուտը,
- նվազեցնել Ազգային ժողովի պատգամավորների թվաքանակը մինչև 25 տոկոս, վերացնել անձեռնմխելիության ինստիտուտը և կանոնակարգել պատգամավորի հետկանչումը,
- հանել համամասնական ընտրակարգով նախատեսված գրավը,
- իջեցնել Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով նախատեսված մանդատների համար անցողիկ սահմանագիծը /շեմը/՝ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համապատասխանաբար՝ 3 և 5 տոկոսի,
- բարձր պրոֆեսիոնալիզմի հիման վրա վարել կադրային ճիշտ քաղաքականություն, կուսակցությունը գտնում է, որ սահմանադրական փոփոխությունները պետք է հանգեցնեն իրավունքի գերակայության, որպես մարդու և քաղաքացու ազատության չափորոշիչ, երբ օրենքի հիմքում դրված կլինի մարդու իրավունքն ու ազգային շահը,
- ազգային ու պետական մտածողության ձևավորում, սպառողի հոգեբանության վերափոխումն արտադրողի:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ տնտեսության ներկա վիճակից դուրս գալու ճգտման ճանապարհին ՄՀԿ-ն ծրագրում է.

- օլիգարխների գործունեության դուրս հանում ստվերից և բերումը իրավական դաշտ: Հասնել տնտեսության վիճակագրական հաստատված տվյալների և բնակչության իրական սոցիալական վիճակի համապատասխանության,
- արդյունավետ և գործուն իրավական դաշտի ստեղծմամբ, մանր ու միջին բիզնեսի համակողմանի հովանավորությամբ միջին խավի ձևավորման աջակցում,

- արտադրության ազգային կարևորագույն ճյուղերի պետական վերահսկողության իրականացում /Հայկական ատոմային էլեկտրակայան, էլեկտրացանց, կապ, ռազմաարդյունաբերական համալիր և այլն/,
- ազգային արդյունաբերողի շահերի պաշտպանում,
- միջպետական և մասնավոր ներդրումների համար բարենպաստ դաշտի ստեղծում: Ներդրողների իրավական պաշտպանությունը կոռումպացված տարրերից, իշխանության հանդեպ արտասահմանյան և տեղացի ներդրողների վստահության վերականգնում, առավել բարեհաճության մթնոլորտի ստեղծում, որի արդյունքում կստեղծվեն աշխատատեղեր,
- պետական իրական հովանավորությամբ գյուղատնտեսության զարգացման աջակցում /ոռոգման ջրի ու պարարտանյութերի անվճար տրամադրում, անտոկոս երկարաժամկետ վարկերի տրամադրում, հողի հարկի դրույքաչափերի իջեցում, հարկային արտոնությունների վերանայում, գյուղմթերքների շուկայի անմիջնորդ վերադարձ գյուղացուն, մշակաբույսերի և գյուղի արտադրանքի ապահովագրում և այլն/,
- սեփականության ցանկացած օրինական ձևի զարգացման նպաստում,
- հարկային կայուն օրինական դաշտի կյանքի կոչում՝ ապահովելով բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց հավասարությունը հարկային դաշտի առջև, օրենսդրական հաճախակի փոփոխությունների բացառում: Պետք է ստեղծել հարկային այնպիսի պայմաններ, որոնք կխթանեն ներդրումները,
- կուսակցությունը կարևորում է վարկային և դրամական գործառնությունների հստակեցումը և նպատակային դրամավարկային տնտեսական հիմնահարցերի կարգավորումը,
- կուսակցությունը կարևոր է համարում բյուջեի և նրա իրացման համաժողովրդական քննարկումը, դրա ընդունման գործընթացի հրապարակայնացումը և բյուջետային մասնահանումների վրա հասարակական վերահսկողության իրականացումը,
- կուսակցությունը կարևորում է մաքսային հսկողության իրականացումը և գործունեության հրապարակայնացման մեխանիզմի մշակումը,
- կուսակցությունը գտնում է, որ պետք նպաստավոր պայմաններ ստեղծելէ տնտեսության ճյուղային տարբեր ոլորտների խնդիրների լուծման համար,
- պետք է նպաստել տնտեսության նպատակային օգտագործմանը, տարածքային և հետագա զարգացման համար ստեղծել նպաստավոր պայմաններ, ապահովել էներգետիկ անվտանգությունը, ստեղծել էներգետիկ նոր հզորություններ ու էներգիայի նոր այլընտրանքային աղբյուրներ,

- կուսակցությունը նախատեսում է արտաքին տնտեսական կապերի զարգացում և փոխշահավետ տնտեսական համագործակցության իրականացում,
- կուսակցությունը կարևորում է վճարային առևտրային համակարգի կատարելագործումը և դրանում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը,
- կուսակցությունը գտնում է, որ պետք է նպաստել ֆինանսական դաշտի պարզեցմանը և զարգացնել արտահանվող արտադրանքի ֆինանսական շուկայի հնարավորությունները,
- պետք է խթանել արդյունաբերության այնպիսի ճյուղերի առաջացմանը և զարգացմանը, որոնք հիմնված են ժամանակակից տեխնոլոգիաների վրա և հումքատար չեն: ՀՀ զարգացման հիմնական ուղին բարձր տեխնոլոգիաների և ինովացիոն զարգացման ներդրումն է՝ հաշվի առնելով հայ ժողովրդի բնատուր ինտելեկտուալ բարձր մակարդակը:

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ հասարակությանն արժանապատիվ կյանք և ապահով ապագա կերտելու համար ՄՀԿ-ն մշակում է ծրագրեր, որոնց առաջնահերթ նպատակն է.

- սոցիալական արդարության հաստատում և սոցիալ-տնտեսական կայունության ապահովում,
- դոտացիոն համակարգի կատարելագործում,
- ընտանիքի կենսամակարդակի բարձրացում,
- անապահով խավերի բժշկական և կրթական մատչելիության խնդիրների լուծում,
- երկրի անվտանգության համար ժողովրդագրական վիճակի բարելավում: Արտագաղթի կասեցում, ներգաղթի կազմակերպում և թրաֆիքինգի դեմ անզիջում պայքարի՝ որպես ժամանակակից ստրկության ձևի, իրականացում,
- երիտասարդ սերնդի բազմակողմանի, ներդաշնակ դաստիարակություն, ավանդականի և նորի ստեղծագործական իմաստավորում, միայնակ մայրերի և երիտասարդ ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի կտրուկ բարելավում, որով հնարավորություն կընձեռվի երկրում ծնելիության՝ որպես վերարտադրողության ստրատեգիական ռեսուրսի, մակարդակի բարձրացման,
- գիտության խթանում՝ տնտեսության տարբեր ոլորտներում գիտական նվաճումների և գյուտերի շահավետ ներդրմամբ, գիտության և կրթության բնագավառում ընդգրկված մտավորականության, հասարակության դերի և սոցիալական ապահովության խնդիրների արժանապատիվ լուծում, որակավորման բարձրացման և սերնդափոխության ճիշտ քաղաքականության մշակում և ներդրում,

▪ ուսման վարձը պետք է սահմանվի կրթության ինքնարժեքի և ազգաբնակչության տնտեսական վիճակի հաշվառումով: Կուսակցությունը կարևորում է անապահով խավերի կրթական խնդիրների լուծումը՝ արդյունաբերության զարգացումը հստակորեն կապելով կրթության զարգացման հետ: Արտադրությունը պետք է մասնագետների պատրաստման պատվիրատու դառնա և վճարի դրա դիմաց:

Անհրաժեշտ է ստեղծել հատուկ կրթական հիմնադրամներ, որոնք թույլ կտան ընդունակ երեխաներին որակյալ կրթություն ստանալ, ինչպես նաև գիտական և կրթական ծրագրերին զուգահեռ բարձրագույն ուսումնական հաստատություններում ազգաբնակչությանը մասնագիտական, սոցիալական և մշակութային ծառայություններ մատուցող կենտրոններ հիմնել,

▪ մասնագիտական կրթության կազմակերպման գործում աշխատաշուկայի անընդհատ փոփոխվող պահանջների մշտական հաշվառում, մեծահասակների կրթության և ցկյանս ուսումնառության ոլորտի զարգացման պետական հովանավորություն անդրագոգիկայի սկզբունքներին համապատասխան,

▪ կուսակցությունը գտնում է, որ սպորտը պետք է դիտել որպես պետության ռազմավարական հիմնախնդիր, որպես բնակչության առողջության պահպանման և զինված ուժերի բարձր մարտունակության գրավական: Պետք է նպաստել պետական համալիր քաղաքականության մշակմանն ազգաբնակչության համընդհանուր սպորտային մարզաձևերում ընդգրկմանը, ամենամյա դոտացիաների տրամադրմանը համահայկական սպորտային միջոցառումներին: Հանրապետության մարզերում զանգվածային մարզաձևերը զարգացնելու նպատակով անհրաժեշտ է մշակել ծրագրեր,

▪ Հանրապետության մշակութային ողջ ժառանգությունը պետք է համարել հայ ժողովրդի համընդհանուր սեփականությունը՝ անկախ դրա ստեղծման ժամանակից, վայրից, հեղինակներից, կրոնական և քաղաքական հայացքներից,

▪ կուսակցությունը կարևորում է օրենսդրական դաշտի կատարելագործումը: Պետք է ստեղծել գործուն մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն իրական ժողովրդավարության կայացման գործում խոսքի և տեղեկատվության ազատության դեմ ուղղված ընդվզման կանխմանը:

Ծառացած խնդիրների լուծման հարցում, որպես երրորդ ուժ, ՄՀԿ-ն կարևորում է համագործակցությունն իշխանամետ, ընդիմադիր և պետականամետ ուժերի հետ: Պետք է սատար կանգնել օրենքին ծառայող իշխանություններին, բայց ոչ իշխանամետներին: Պետք է ներկայի և ապագայի համար պատասխանատու լինել ժողովրդի առջև:

5. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՄՀԿ-ն՝ որպես միասնական, կայուն և հզոր պետականության, երկրի և՛ ներքին պետական կառավարման, և՛ արտաքին քաղաքականության ոլորտի առողջացման ջատագով, աշխարհում հայոց երկրի արժանապատիվ տեղին ցանկանում է հասնել այդ ոլորտների հիմնարար փոփոխություններով, որի համար աշխատանքներ է իրականացնելու՝ նպաստելու հետևյալ ուղղություններին:

5.1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- ազգային պետականության ամրապնդում, կադրային քաղաքականության իրականացում՝ արհեստավարժության հիման վրա,
- պետական ապարատի անհարկի ուռճացման, նրա աշխատավարձերի և ֆինանսական այլ միջոցների անիրատես շռայլման կասեցում,
- անողոք պայքարի իրականացում վարչական մարմինների պաշտոնատար անձանց կաշառակերության, չարաշահումների դեմ, որի արդյունավետ ձևը, ըստ միջազգային փորձի, իրավունքի գերակայության և բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց հավասարության ապահովումն է,
- օրենքի առջև բոլոր քաղաքացիների իրական հավասարության արմատավորում,
- պետական և հասարակական,քաղաքական կառույցներում կնոջ դերի բարձրացում և կարևորագույն գործընթացներում նրա համակողմանի ընդգրկում,
- մարդու իրավունքների լիարժեք իրացում, էկոլոգիական ճգնաժամից դուրս գալու ուղղությամբ պետական հոգատարության հստակեցում և ազգաբնակչության բնապահպանական կուլտուրայի դաստիարակում:

5.2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են իրենց գործունեության մեջ ղեկավարվելու ազգաբնակչության շահի գերակայության սկզբունքով: Հստակորեն պետք է գիտակցեն, որ իրենց ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի իրավունքի ապահովմանը և գտնվի ժողովրդի ամենօրյա հսկողության ներքո: Պետությունը պարտավոր է անհրաժեշտ պայմաններ ստեղծել, որպեսզի ոչ ոք տեղերում թույլ չտա պաշտոնեական դիրքի չարաշահում,
- ՀՀ-ը, տնտեսապես զարգացած պետություն չլինելու պատճառով, չի կարող ապահովել համայնքների արդյունավետ զարգացումը: Կուսակցությունը ստեղծված պայմաններում նպատակահարմար է գտնում միջհամայնքային սոցիալ-տնտեսական, այդ թվում՝ տեխնիկական սպասարկման արտադրական միավորումների ստեղծումը, որոնք ի զորու կլինեն նպաստելու համայնքների զարգացմանը,

- պետությունը պարտավոր է պետական ապարատի միջոցով մշտական հսկողության տակ պահել տեղական ինքնակառավարման մարմինների զարգացման վիճակը: Հնարավորություն ընձեռի հասարակության լայն խավերին մասնակցելու համայնքների գործունեությանը և տեղ գտած թերությունների վերացմանը: Ապահովել մարզերի ֆինանսատնտեսական, սոցիալ- իրավական զարգացումը:

5.3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ

- Իրական ժողովրդավարական և իրավական հասարակության ձևավորումը ՀՀ-ում,
- կառավարման թափանցիկ ու մրցակցային մեխանիզմի ստեղծումը, ընտրական արդար և հասարակության կողմից ընդունելի համակարգի կայացումը,
- քաղաքական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ մրցակցային կուսակցական համակարգի ներդաշնակ կայացումը,
- պետական կառավարման մարմինների արդյունավետ և ռազմավարական գործունեությունը, անգիջում պայքար կոռուպցիայի, պետության ու բնակչության միջոցների փոշիացման և այլ հանցավոր երևույթների դեմ,
- տեղական ինքնակառավարման մարմինների և համատիրությունների զարգացումը գործունեության անկախության երաշխավորմամբ, քաղաքացիների ներգրավման մակարդակի բարձրացմամբ,
- անկախ, անկողմնակալ և արդյունավետ գործող դատական համակարգի գործունեության երաշխավորումը,
- զանգվածային լրատվական միջոցների՝ որպես հանրային իշխանության միջոցի, ազատ զարգացմանն աջակցություն:

5.4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

- ժամանակակից սպառազինություններով ապահովված, արդիական զենքով և զինտեխնիկայով համալրված, մարտունակ և մրցունակ զինված ուժերի զարգացումը,
- զինված ուժերում կադրային զինծառայողների ավելացումը, աստիճանաբար անցումը պրոֆեսիոնալ բանակի,
- հասարակության գիտական ներուժի առաջընթաց և շարունակական ներգրավումը զինված ուժերում, պաշտպանության ոլորտի հետագա զարգացումը և սպառազինության արդիականացումը,
- սահմանային պաշտպանության խնդիրներում նոր տեխնոլոգիաների, հատկապես սահմանապահ ռոբոտների, կիրառման հետևողական ընդլայնումը,

- ռազմաարդյունաբերական համալիրի շարունակական ընդլայնումը, կատարելագործումը և հզորացումը,
- ռազմական կրթական հաստատությունների ավելացումը, արդիականացումը:

5.5.ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

- Առողջապահական ապահովագրության համակարգի ներդրում, սոցիալական փաթեթների դաշտի ընդլայնում,
- Ոչ վարակիչ հիվանդությունների /սրտանոթային, ուղեղանոթային, հոգեկան, շաքարային դիաբետ և այլն/ կանխարգելման և բուժման ազգային ռազմավարական ծրագրերի մշակում, իրականացում, մասնավորապես՝ ազգային գրանցամատյանի ստեղծում,
- Հիվանդների հաշվառման, ազգային գործելակարգերի /կանխարգելում, ախտորոշում, բուժում, վերականգնում/ մշակում և ներդրում,
- Բժշկական օգնության որակի, գնահատման համակարգի ձևավորում և որոշումների ընդունում,
- Առողջապահության ոլորտում համաշխարհային արդի համակարգի ինտեգրում,
- Կանխարգելիչ բժշկության արդիականացման և ընդլայնման համալիր ռազմավարության մշակում և իրականացում,
- Անհետաձգելի բուժօգնության անվճար տրամադրում, ցանկացած հիվանդ պետք է բուժվի անկախ նրա վճարունակությունից:

5.6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՈԼՈՐՏ

- ՀՀ-ում բնապահպանական խնդիրների լուծման ուղղությամբ պետական կոշտ և ռամավարական դիրքորոշումների հստակեցումը,
- պետության բացառիկ սեփականությունը հանդիսացող ընդերքի շահագործումը բացառապես նոր տեխնոլոգիաների ներդրմամբ՝ միաժամանակ խստացնելով պատասխանատվությունն ընդերքի անհարկի ու անխնա օգտագործման, կանաչ տարածքների և անտառածածկույթով վայրերի պահպանման համար,
- հանքարդյունաբերության ոլորտում թափոնների արդյունավետ վերամշակումը և պահպանումը,
- ջրային ռեսուրսների օրըստօրէ նվազումը հաշվի առնելով, կուսակցությունը գերակա խնդիր է դիտարկում ջրային ռեսուրսների /վերգետնյա և ստորգետնյա / պահպանումը և ավելացումը, ինչպես նաև ՀՀ անտառածածկույթի վերականգնումը:

5.7.ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

- Կուսակցությունը առաջնային է համարում ՀՀ-ում գիտության զարգացման խթանումը, տնտեսության տարբեր ոլորտներում գիտական նվաճումների և գյուտերի շահավետ ներդրումը, մտավորականության դերի բարձրացումը և նրանց սոցիալական ապահովության խնդիրների արժանապատիվ լուծումը,
- գիտության համակարգի արդիականացումը և բյուջետային հատկացումների ավելացումը,
- պետական աջակցության ընդլայնումը երիտասարդ գիտնականներին,
- կրթական հավասար պայմանների ապահովման վերականգնումը և վճարովի կրթական համակարգի հասանելիությունը հասարակության բոլոր խավերի համար,
- մասնագիտական կրթության կազմակերպման գործում աշխատաշուկայի անընդհատ փոփոխվող պահանջների ուղղորդված, պետական մասշտաբով համակարգված հաշվառումը,
- երկարաժամկետ , ցածր տոկոսադրույքներով ուսանողական վարկերի տրամադրումը:

5.8. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

- Նպաստել ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների պահպանմանը, մշակութային կոլեկտիվների ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը,
- հասնել աշխարհում հայ մշակութային արժեքների՝ որպես զուտ հայկական, ճանաչմանը և դրանց իրենց նշանակությամբ ծառայացնելը,
- գրանցել աշխարհասփյուռ հայ պատմական, մշակութային հուշարձանները, այդ թվում և արդեն ոչնչացվածները, գտնվելու վայրը և հասնել ոչ միայն տվյալ պետությունում, այլև միջազգային մասշտաբով դրանց անձնագրավորման, պահպանմանն ու վերականգնմանը,
- նպաստել պետական ծրագրերի իրականացմամբ Հանրապետությունում գտնվող այլ ազգերի ու ազգային փոքրամասնությունների մշակութային ու այլ արժեքների պահպանությանը,
- օժանդակել մշակույթի ոլորտում թվայնացված ժամանակակից տեղեկատվական բազայի ստեղծմանը, պատմամշակութային, թանգարանային ու կինո ֆոտո ֆոնո արխիվային ֆոնդի պահպանությանը:

5.9. ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ

▪ Կուսակցությունը սպորտի զարգացումը և մարդկանց ֆիզիկական մակարդակի բարձրացումը դիտում է որպես պետության ռազմավարական հիմնախնդիր,

▪ մշակել սպորտի զարգացմանը միտված պետական համալիր քաղաքականություն, բարձրացնելով սպորտի պետական ֆինանսավորման ծավալները, ընդունել պետական ծրագրեր, ապահովել առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ պայմաններ,

▪ ընդլայնել մարզադպրոցների ու մարզական ակումբների ցանցը՝ տարանջատելով մասսայական սպորտը պրոֆեսիոնալից,

▪ վերականգնել ազգային ավանդական մարզաձևերը, մասսայականացնել, օրինակ, ժամանակին ժողովրդի մոտ լայն տարածում ստացած ու սիրված հայկական շաշկիի՝ տամայի, ուսուցումը և համահայկական խաղերում ընդգրկելը:

6. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏ

▪ մեր նախնիների՝ արտաքին քաղաքականության ասպարեզում ճկուն, կոմպլիմենտար մոտեցմանը հետևում. մեր ժողովրդի հազարամյակների պատմությունն այդ ճշմարտության ապացույցն է: Այդպես է եղել և՛ Արտաշեսյանների, և՛ Արշակունիների, և՛ Բագրատունիների, և՛ Կիլիկիայում՝ Ռուբինյանների ու Հեթումյանների ժամանակ,

▪ հայ ժողովուրդը միշտ եղել է ինտերնացիոնալիստ, հարգել և հարգում է այլ ազգերի, ժողովուրդների բարքերը, սովորույթները: ՄՀԿ-ն սատարելու է Հայաստանի Հանրապետությանը՝ անզիջում պայքար մղելու աշխարհի ցանկացած երկրում ՀՀ քաղաքացիների և հայ ժողովրդի զավակների նկատմամբ կրոնական, ազգայնամոլական և սքինհեդական, ինչ ձևով որ այն արտահայտվի՝ ռուսական, վրացական, թուրքական կամ գերմանական, հնարավոր դրսևորումների դեմ,

▪ նպաստել հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, ազգի ոտնահարված իրավունքների և հասցված վնասի վերականգնմանը,

▪ հասնել 1921թ. Մոսկվայի և Ղարսի պայմանագրերի մերժմանը՝ որպես բոլոր ժամանակների միջազգային իրավունքի նորմերի կոպիտ ոտնահարման փաստի,

▪ Արցախի՝ որպես բանակցային գործընթացի իրավահավասար կողմի, ազատ ինքնորոշման սատարում, Ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորման և Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման աջակցում: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում միջազգային կառույցներին Արցախի Հանրապետության ինտեգրման նպաստումը՝ որպես Արցախի ինքնորոշման և անվտանգության գրավական, հակառակ դեպքում ճանաչել Արցախի անկախությունը ՀՀ կողմից,

- նպաստել հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների զարգացմանը,
- Հայաստանը բարիդրացիական հարաբերություններ պետք է հաստատի տարածաշրջանի բոլոր պետությունների հետ, ակտիվորեն համագործակցի ԱՊՀ երկրների հետ՝ ելնելով ռազմավարական շահերից՝ համակովկասյան կայունացման նպատակով սերտորեն համագործակցի Ռուսաստանի և Վրաստանի հետ, փոխշահավետության հիման վրա զարգացնի և խորացնի հավասարակշռված ու գործընկերային հարաբերությունները ԱՄՆ-ի, Չինաստանի, Արաբական աշխարհի, Եվրամիության, Իրանի և աշխարհի մյուս երկրների հետ: Կուսակցությունը կարևորում է համակովկասյան կայունացման նպատակով առանց նախապայմանների համագործակցությունը Թուրքիայի ու Ադրբեջանի հետ: Կուսակցությունը գտնում է, որ տարածաշրջանում կայունության և տնտեսական զարգացման հասնելու Հայաստանի հանրապետության ուղին Եվրամիությանն ինտեգրվելն է, որով կապահովվի ժողովրդավարական միջազգային չափանիշների իրական ներդրումը երկրում: Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանի ակտիվ համագործակցությունն ԱՊՀ երկրների հետ բխում է ՀՀ ռազմավարական շահերից,
- ՀՀ հուսալի անվտանգության ապահովման և տարածաշրջանում խաղաղության պահպանման նպատակով շարունակել համագործակցությունն ու հավասարակշռված հարաբերությունների իրականացումը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության /ՀԱՊԿ/ հետ:

ՀՀ ռազմավարական շահերից է բխում նաև հեռանկարային ծրագրերի մշակումը, զինված ուժերի արդիականացման ուղղությամբ ՀԱԴԿ /ՆԱՏՕ/ փոխհամագործակցությունը՝ չհակադրվելով ՌԴ ռազմաքաղաքական շահերին:

ՄՀԿ-ն գտնում է, որ համակովկասյան կայունացման սերտ համագործակցության նպատակով պետք է շարունակել դիտել Ռուսաստանը որպես ավանդական դաշնակից և խորացնել ու զարգացնել փոխշահավետ տնտեսական համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության հետ:

Կուսակցությունը կարևորում է հարաբերությունների զարգացումը և խորացումն Իրանի հետ՝ փոխշահավետության հիման վրա, մանավանդ, որ տարածաշրջանային իրավափոխհարաբերություններում գնալով մեծանում է Հայաստան-Իրան գործընկերության դերը:

Սերտ համագործակցության և համակովկասյան կայունացման նպատակով պետք է իրականացնել փոխշահավետ տնտեսական քաղաքականություն Վրաստանի հետ՝ հատկապես տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում: Սակայն կուսակցությունը միանշանակ պաշտպանում է ջավախահայության շահերը և իր ծրագրային ազգապահպան

քաղաքականությունից ելնելով ձեռք է առնելու բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի Մերձավոր Սփյուռքի հայը, այդ թվում և ջավախեցին, պետության մասշտաբով չօտարվի իր հայրենի վայրերից, ընդհակառակն, ավելի խոր արմատներով ամրանա:

7. ՄՀԿ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Չգտելով հասնել հայրենիքի և աշխարհի բազմաթիվ երկրներում սփռված հայ ժողովրդի՝ Սփյուռքի միասնությանը, և «Հայե՛ր, միացե՛ք» կարգախոսը դիտելով որպես համազգային խնդիր՝ ՄՀԿ-ն որոշում է.

- ստեղծել սերտ համագործակցություն մեր նախնիների բազմահազարամյա «Սրբազան ծեսերի» երկրում Հայրենիքի և Սփյուռքի կուսակցությունների, հոգևոր, հասարակական, քաղաքական կազմակերպությունների, գիտության, մշակույթի և զանգվածային լրատվական միջոցների միջև,
- հենվելով վերը նշված սերտ համագործակցության վրա՝ ստեղծել Հայրենիքի և Սփյուռքի միասնական ազգային գաղափարախոսություն. «Հայ ժողովրդի ուժը իր միասնության մեջ է»,
- որպեսզի հայ ազգի միասնության՝ դարերով հնչած այդ կարգախոսը, վերածվի դարին համապատասխանող գործնական իրականության, անհրաժեշտ է ստեղծել մշտական գործող մեխանիզմ՝ Հայրենիքի և Սփյուռքի Միասնության Խորհուրդ /ՀՍՄԽ/ հասարակական, քաղաքական կազմակերպություն՝ նրանում ընդգրկելով հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչներին՝ մշակելու այդ խորհրդի գործելակերպի կանոնակարգը, քաղաքական, իրավական և սոցիալ-տնտեսական հարցերին առնչվող հիմնախնդիրները,
- հաշվի առնելով հայ ժողովրդի միասնության և համախմբման գործում կրոնական տարբեր աղանդների վնասակար ազդեցությունը՝ ամենուր նպաստել Հայ առաքելական եկեղեցու գործունեությանը, հայ ժողովրդին հոգեհարազատ քրիստոնեության, Սուրբ երրորդության և «Մեկ ազգ, մեկ մշակույթ, մեկ հավատ, թեկուզ կրոնական տարբեր հավատքների առկայության դեպքում» կոչն ընդունել որպես միասնության նշանաբան՝ միավորելով միասնական գաղափարի շուրջը աշխարհասփյուռ բազմակրոն հայությանը,
- Հայրենիք և Սփյուռք բառերը գրել մեծատառերով,
- քաղաքական, տնտեսական, բարոյական և սոցիալական վերափոխումների հետևանքով առաջացած անարդարության, կաշառակերության, գործազրկության և

այլ բացասական երևույթների արդյունքում տեղ գտած տարեցտարի աճող արտագաղթը կանխելու և հայրենակիցներին Հայաստան վերադարձնելու համար ՄՀԿ-ն իր մտավոր, գիտական, բարոյական, իրավական և տնտեսական ուժի ողջ կարողությամբ ձգտում է իրականացնել պայքար՝ ժողովրդին աղքատության եզրին հասցրած վերոհիշյալ բացասական երևույթների դեմ:

ՄՀԿ ԿԱՐԳԱԽՈՍՆԵՐՆ ԵՆ՝

«ՀԱՅԵ՛Ր, ՄԻԱՑԵ՛Ք»,
«ՃՇՄԱՐԻՏ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»,

ՄՀԿ-ի գործունեությունն առաջին հերթին պետք է ուղղված լինի արտագաղթի կասեցմանը, ազգային գաղափարախոսության հրամայականով՝ հայ ազգի համախմբմանը, Հայաստանում հասարակական, քաղաքական, սոցիալ-իրավական, տնտեսական և հոգևոր ներուժի համատեղմանն ու կենսապայմանների բարելավմանը, Հայրենիքի անվտանգության ապահովմանը: